

Ձերդ Գերագանցություն Վահագն Խաչատուրյանին
Հայաստանի Հանրապետության նախագահ
Մարշալ Բաղրամյան պողոտա 26/1,
Երևան 0024,
Հայաստանի Հանրապետություն
Բրյուսել, Մարտի 3, 2023

Թեմա՝ Հարձակում փաստաբանների՝ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ

Ձերդ գերագանցություն,

Ես գրում եմ Ձեզ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) անունից, որը ներկայացնում է 46 երկրների փաստաբաններին ու փաստաբանական միությունները, և նրանց միջոցով ավելի քան 1 միլիոն եվրոպացի իրավաբանների: CCBE-ն մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարգմանը և հատկապես մտահոգված է ամբողջ աշխարհում իրավապաշտպանների իրավիճակով:

CCBE-ն իր խոր մտահոգություններն է հայտնում փաստաբաններ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ վերջերս կատարված ֆիզիկական և բանավոր ոտնձգության վերաբերյալ:

Համաձայն ստացված տեղեկատվության, ոստիկանության մի խումբ ծառայողներ բիրտ ուժ և բռնություն են կիրառել փաստաբաններ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ, ովքեր իրենց մասնագիտական գործունեությունն էին կատարում Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնում: Հաղորդվում է, որ ոստիկանության ծառայողները վիճաբանություն նախաձեռնած գործընկերների հետ միասին, ծեծկռտուք են սկսել փաստաբանների հետ, հայիոյել են նրանց, միաժամանակ ոտքերով ու բռունցքներով հարվածել փաստաբաններին: Մենք հասկանում ենք, որ փաստաբաններ Մարզպետ Ավագյանն ու Էմանուելը Անանյանը ոստիկանության բաժնում էին՝ պաշտպանելու իրենց պաշտպանյալների շահերը, ովքեր անչափահաս են և ովքեր պնդում էին, որ իրենց խոշտանգել և ծեծել են նույն ոստիկանները, ովքեր հարձակվել են փաստաբանների վրա:

Մեր անդամը՝ ՀՀ փաստաբանների պալատը տեղեկացնում է, որ այսպիսի երևույթն աննախադեպ է իր բնույթով և խիստ վրդովեցուցիչ: Նրանք խստորեն դատապարտել են այդ ոստիկանության ծառայողների կողմից փաստաբանների նկատմամբ կիրառված բռնությունը՝ ընդգծելով, որ այդպիսի ոտնձգությունը անձանց իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հանձնառություն ունեցող դերակատարի նկատմամբ այդպիսի ոտնձգությունը խաթարում է մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգը և տեղ չի կարող ունենալ ժողովրդավարական հասարակությունում: Այս համատեքստում, նրանք պահանջել են, որպեսզի իրավասու մարմինները իրականացնեն հետևողական քննություն դեպքի առնչությամբ՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու նպատակով: Մենք գիտենք, որ այս առնչությամբ պատասխանատու ոստիկանության ծառայողների աշխատանքը այս ընթացքում ժամանակավորապես կասեցվել է:

Այս համատեքստում CCBE-ն ցանկանում է ձեր ուշադրությունը հրավիրել Փաստաբանների դերի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներին (կցվում է), Փաստաբանների գործունեության երաշխիքների մասին 16, 17 և 18 սկզբունքներին և խոսքի և միավորումների ազատության 23-րդ սկզբունքին:

Հաշվի առնելով վերոնշյալը, CCBE-ն, կանգնած լինելով իր անդամ՝ Փաստաբանների պալատի կողքին, հորդորում է Ձերդ Գերազանցությանը ապահովել այս հարձակման ամբողջական և անաչառ հետաքննության իրականացումը՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ համաձայն միջազգային չափանիշներին:

Ի լրումն, CCBE-ն ցանկանում է հիշեցնել, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ չվախենալով հաշվեհարդարից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ ոտնձգություններից՝ պահպանելու արդարադատության իրականացման և օրենքի գերակայության անկախությունն ու ամբողջականությունը:

Անկեղծորեն Ձեր,
Պանայոտիս Պերակիս
Նախագահ